Հ Ր Ա Մ Ա Ն N 368-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«28» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1917-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետը և **ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով.**

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ՝ Լուսինե Մարտիրոսյանին:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ Լուսինե Մարտիրոսյանին՝ ապահովել տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողների պարտականությունների կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ Նունե Եղիազարյանին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատու պաշտոնատար անձի պարտականությունները վերջինիս քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում ամրագրելու կապակցությամբ:

4. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակության հետ կապերի բաժնի պետ

Լուսինե Մարտիրոսյանին՝ ձեռնարկել համապատասխան միջոցներ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության վեբ կայքում հասարակության համար հասանելի տեղեկատվություն տեղադրելու կապակցությամբ:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ՝ Սուրեն Քրմոյանին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ